# ԴԻՏՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

*Լրացավ սովետահայ նշանավոր պատմաբան, ականավոր հայագետ և կովկասագետ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Սուրեն Տիգրանի Երեմյանի ծննդյան 70-ամյակը։*

*Ս. Երեմյանը ծնվել է Թբիլիսիում, 1908 թ. ապրիլի 10-ին, բանվորի ընտանիքում։ Տակավին միջնակարգ դպրոցում դրսևորվեցին պատմության և աշխարհագրության նկատմամբ պատանի Ս. Երեմյանի ունեցած հակումները։ Ռուսական դպրոցի վերջին դասարաններում նա ինքնուրույն սկսում է սովորել հայերեն, վրացերեն, անգամ գրաբար։ 1928 թ. Ս. Երեմյանն ընդունվում է Երևանի պետական համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը։ Ուսանողական տարիներին Հ. Մանանդյանի ղեկավարությամբ նա գրում է առաջին գիտական աշխատանքն Անդրկովկասի առևտրական ուղիների մասին IV դ.՝ ըստ հռոմեական ճանապարհորդական քարտեզի՝ «Պեյտինգերյան աղյուսակի»։ 1931 թ. Ս. Երեմյանը մասնակցում է Վաղարշապատի պեղումներին։*

*Համալսարանն ավարտելուց հետո Ս. Երեմյանն ընդունվում է ՍՍՀՄ ԳԱ անդրկովկասյան մասնաճյուղի կովկասագիտական ինստիտուտի ասպիրանտուրան։ Նրա գիտական ղեկավար է նշանակվում ակադեմիկոս Ն. Մարը։*

*1935 թ. Ս. Երեմյանի կյանքում նոր շրջան է սկսվում՝ կապված Լենինգրադի հետ։ Արդեն կովկասագիտության ինստիտուտի գիտաշխատող Ս. Երեմյանը գործուղվում է Լենինգրադ, սովետական պատմական գիտության խոշորագույն կենտրոններից մեկը՝ ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտ։ Այստեղ նույն տարում նա հաջողությամբ պաշտպանում է «Քարթլիի (Արևելյան Վրաստանի) ֆեոդալական կազմավորումները մարզպանական շրջանում» թեմայով դիսերտացիա և ստանում պատմական գիտությունների*

թեկնածուի գիտական աստիճան։ Դիսերտացիայի պաշտպանությունից անմիջապես հետո (1935 թ. դեկտեմբեր—1938 թ.) ընդունվում է նույն ինստիտուտի դոկտորանտուրան։ Մինչև դոկտորանտուրան ավարտելը նրան հանձնարարվում է «ՍՍՀՄ պատմություն» բազմահատորյակի համար գրելու Հայաստանի և Կովկասյան Աղվանքի պատմության բաժինը՝ հնագույն շրջանից մինչև XI դ.։ Ս. Երեմյանը հաջողությամբ իրականացնում է իրեն տրված այդ գիտական հանձնարարությունը, դրան կից ներկայացնելով նաև Կովկասի պատմական քարտեզները։

Ս. Երեմյանի մանկավարժական գործունեության սկզբնավորումը ևս կապված է Լենինգրադի հետ։ 1935 թ. սկսած նա հայ ժողովրդի պատմություն էր դասախոսում Լենինգրադի պետական համալսարանի պատմության և բանասիրական ֆակուլտետներում։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի (Արմֆան) հրավերով 1941 թ. մարտին Ս. Երեմյանը Լենինգրադից տեղափոխվում է Երևան և իր գիտական կյանքը առմիշտ կապում պատմության ինստիտուտի, Հայաստանի գիտությունների ակադեմիայի հետ։ 1945 թ., երբ Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում կազմակերպվում են առանձին բաժիններ, նա դառնում է հին և միջին դարերի (հետագայում միայն հին դարերի) պատմության բաժնի վարիչը։

Ս. Երեմյանը 1953 թ. Մոսկվայում պաշտպանում է դոկտորական դիսերտացիա՝ «Հին Հայաստանի ստրկատիրական հասարակարգը» թեմայով։ Նույն տարում նա ընտրվում է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ և նշանակվում պատմության ինստիտուտի դիրեկտոր։ 1963 թ. Ս. Երեմյանն ընտրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս։ 1965 թ. ընտրվում և մինչև 1968 թ. վարում է ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնը։

Հայաստան տեղափոխվելուց հետո էլ Ս. Երեմյանը շարունակեց մանկավարժական աշխատանքը։ 1941 թ. մինչև 1950-ական թվականների վերջերը նա հայ և վրաց ժողովուրդների պատմություն և պատմական աշխարհագրություն առարկաներ էր դասավանդում Երևանի պետական համալսարանի, Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական, Վ. Բրյուսովի անվան ռուսական մանկավարժական ինստիտուտների տարբեր ֆակուլտետներում, մարքսիզմ-լենինիզմի երեկոյան համալսարանում։ Մեծ են Ս. Երեմյանի ծառայությունները հատկապես երիտասարդ գիտական կադրեր պատրաստելու գործում։ Բավական է նշել, որ նա ղեկավարել և աճեցրել է երկու տասնյակից ավելի ասպիրանտներ ու դիսերտանտներ։

Ս. Երեմյանը ակտիվ մասնակցում է հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին։ 1945 թ. հունվարից ՍՄԿԿ անդամ Ս. Երեմյանը, որպես պատգամավոր, մասնակցել է Հայաստանի կոմունիստական կուսակցության XVII համագումարի աշխատանքներին։

Կուսակցությունը և կառավարությունը բարձր են գնահատել Ս. Երեմյանի ծառայությունները, նրան պարգևատրելով Աշխատանքային կարմիր դրոշի, Պատվո նշան շքանշաններով և մի շարք մեդալներով։ Նա արժանացել է ՀՍՍՀ ԳԱ բարձրագույն պարգևին՝ «Մեծարման գրի»։ Մենդյան 70-ամյակի և գիտական բեղմնավոր գործունեության համար Ս. Երեմյանը պարգևատրվեց Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով։

Հայագիտական փայլուն կրթությունը, հին ու նոր վրացերենի հիմնավոր իմացությունը, կովկասագիտական խոր գիտելիքներն այն ամուր հիմքը հանդիսացան, որով Ս. Երեմյանը ծանրակշիռ ներդրում կատարեց սովետահայ պատմագրության, նրա հին ու միջին դարերի պատմության գիտական մշակման գործում։

Լայն է ընդգրկում են Ս. Երեմյանի գիտական հետաքրքրությունների շրջանակները։ Նրան հավասարապես զբաղեցրել են հայ ժողովրդի ծագումից մինչև ուշ միջնադարի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության, հայ-վրացական առնչությունների ու կովկասագիտության, Հայաստանի և Կովկասի պատմական աշխարհագրության ու քարտեզագրության խնդիրները։

Ս. Երեմյանը, հիմնավորապես զբաղվելով հին շրջանի պատմության առանցքային պրոբլեմներով, կարևոր ուշադրություն է դարձրել հայ ժողովրդի ծագման խնդրին։ Հենվելով հայագիտության նվաճումների վրա, Արմե-Շուբրիա երկրի ցեղային միությանը նվիրված աշխատանքում հայ ժողովրդի կազմավորման մեջ գլխավոր դեր հատկացնելով տեղական ցեղերին ու ցեղային միավորումներին, Ս. Երեմյանը միաժամանակ նշում է, որ նրանցից մուշքերը հայտնվելով Փոքր Ասիայում, իրենց ազգակից փռյուգիացիների և ուրմեացի-արմենների հետ հաստատվում են Արմե-Շուբրիա երկրում, ուր ստեղծվում է հայերի և նրանց ազգակից ցեղերի միություն։ Հայկական ցեղերը Արմե-Շուբրիայից թափանցում են Ուրարտուի կենտրոնական շրջանը՝ Տուշպա-Վանի տարածքը։

Ս. Երեմյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում է եղել նաև Հին Հայաստանի հասարակական կարգի, նրա բնույթի հարցը։

1930-ական թթ. վերջերին Ս. Երեմյանը, հենվելով հայ պատմագրության նվաճումների և այդ շրջանում հինարևելյան հասարակությունների ստրկատիրական բնույթի մասին սովետական պատմագրության մեջ տիրապետող տեսության վրա, նոր տեսակետ մշակեց Հին Հայաստանի հասարակարգի մասին։ Հատկապես «Հին Հայաստանի ստրկատիրական հասարակարգը» դոկտորական դիսերտացիայում և մյուս աշխատություններում Ս. Երեմյանը առավել խորացրեց ու հիմնավորեց իր նոր տեսությունը։

Ս. Երեմյանը նախաֆեոդալական Հայաստանի գյուղատնտեսության, արհեստների, առևտրի և առևտրական ուղիների, չափերի ու կշիռների և այլ հարցերի համակողմանի լուսաբանման հիման վրա ներկայացնում է Հին Հայաստանի տնտեսության ամբողջական պատկերը։ Նա վեր է հանում արևելյան ստրկատիրական հասարակարգերին հատուկ, նախաֆեոդալական Հայաստանում մեծ կշիռ ունեցող հին հայկական գյուղական համայնքի լությունը, ցույց տալիս, որ Հայաստանում բավական տարածում գտած դաստակերտներն ու ագարակները սեփականատիրական տնտեսություններ են եղել, ուր լայնորեն կիրառվել է ստրուկի աշխատանքը։ Նա ըստ ամենայնի անդրադառնում է Հայաստանի պետական կառուցվածքին, որում հատկապես լավ է արտահայտվել Հին Հայաստանի ստրկատիրական բնույթը։

Այսպիսով, սովետական պատմագրության մեջ առաջին անգամ ակադեմիկոս Ս. Երեմյանը խիզախեց դուրս գալ նախնադարյան համայնական կարգերից ուղղակի ֆեոդալական հասարակարգին անցնելու հայ պատմագրության մեջ արմատացած ավանդական ուղուց և ցույց տալ ու գիտականորեն հիմնավորել Հին Հայաստանի ստրկատիրական բնույթը։

Հայ պատմագրության մեջ ֆեոդալական հարաբերությունների ձևավորման խնդիրը տեսականորեն հարուցել է տարակարծություններ ու վեճեր։ Ս. Երեմյանը ֆեոդալիզմի ծագումը կապեց ստրկատիրական հասարակարգի ճգնաժամի հետ և ցույց տվեց, որ մեր թվարկության III—IV դդ. ֆեոդալական արտադրաեղանակը Հայաստանում վերջնական հաղթանակ էր տարել։ Ս. Երեմյանն ընդգծում է նաև այն հանգամանքը, որ Հայաստանում ստրկատիրության ընդերքում, I դ. սկսած, հասարակության զարգացումն ընթացել է ֆեոդալիզմի տարրերի հանդես գալով ու աստիճանաբար առնականանալով։ Խոսելով երկրի ֆեոդալականացման պրոցեսի մասին, նա միաժամանակ նշում է, որ Հայաստանի ծայրամասային նահանգներում, որտեղ ստրկությունը շատ թույլ էր արտահայտված, նախնադարյան-համայնական հասարակարգը և շահագործման նահապետական ձևերն ուղղակիորեն փոխարինվում են վաղ ֆեոդալական ձևերով։ «Հասարակության զարգացումը,— գրում է Ս. Երեմյանը,— այստեղ ընթացել է ուղիղ ճանապարհով նախնագարյան համայնական հասարակարգից դեպի ֆեոդալիզմը»։

Հայ ժողովրդի միջնադարյան շրջանի կարևոր, առանցքային պրոբլեմներից է ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության պարբերացումը։

Հայ բուրժուական պատմագրությունը ֆեոդալիզմը դիտել է ոչ թե որպես արտադրության որոշակի եղանակ, այլ քաղաքական կազմակերպության որոշակի ձև։ Մեթոդոլոգիական նման սխալ դիրքերից մոտենալով, բնականաբար, նրան չի հաջողվել նաև գիտական մեկնություն տալ սույն պրոբլեմին։

1940-ական թվականներին տվետահայ պատմաբանների մեջ ակտիվ բանավեճ սկսվեց Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության պարբերացման հարցի շուրջը։ Հանրապետական և միութենական ամսագրերում տպագրվեցին իրարամերժ բազմաթիվ հոդվածներ։

Ս. Երեմյանը 1951 թ. «Вопросы истории» կենտրոնական ամսագրում հրատարակեց «Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության պարբերացման փորձ» համեստ խորագիրը կրող հոդվածը։ Դա հեղինակի երկարամյա աշխատանքի արդյունքների հանրագումարն էր՝ շարադրված ամփոփ և ընդհանրացված ձևով։ Գիտական լուրջ հետաքրքրություն ներկայացնող այս հոդվածում Հայաստանում ֆեոդալական հասարակարգի սկզբնավորումը դիտվում է III—IV դդ. և հասցվում մինչև XIX դ.։ Ս. Երեմյանի մշակած պարբերացման համաձայն Հայաստանում ևս ֆեոդալական հասարակությունը անցել է երեք հիմնական պատմափուլ՝ վաղ ֆեոդալիզմի, որն ընդգրկում է III—VIII դդ., զարգացած ֆեոդալիզմի՝ IX—XIII դդ. և ֆեոդալիզմի վայրէջքի կամ հեղինակի տերմինով ասած, ֆեոդալիզմի քայքայման ժամանակաշրջան՝ XIV—XIX դդ.։ Ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության պարբերացման Ս. Երեմյանի մշակած ուրվագիծը ընդունվեց և ճանաչում գտավ։

Ս. Երեմյանի գիտական ստեղծագործության մեջ էական տեղ է գրավում նաև հին և միջնադարյան Հայաստանի քաղաքական պատմությունը։ Հայաստանի և Անդրկովկասի պատմության սիստեմատիկ շարադրանքի ընթացքում և առանձին հոդվածներում քաղաքական պատմության մեծ ու փոքր բազմաթիվ հարցեր են դրվել ու լուծվել, որոնք հիմք են հանդիսացել և գուռ թացել նոր հետազոտությունների համար, խթանել պատմագիտական միտքը։

Բազմավաստակ հայագետի գիտական վաստակի մի զգալի մասը դուրս է դալիս հայագիտության ոլորտից և ավելի լայն ընդգրկում ձեռք բերում։ Նրա հատկապես միջնադարի պատմությանը վերաբերող շատ աշխատություններում հանգամանալից քննվում են հայ և վրաց ժողովուրդների տնտեսական և մասնավորապես քաղաքական կապերն ու փոխազդեցությունները, իսկ որոշակի դարաշրջաններում՝ նրանց պատմական ճակատագրի ընդհանրությունը։ Առանձնապես լավ է լուսաբանված հայ-վրացական համատեղ պայքարը՝ Հայաստանը սելջուկ-թուրքերի տիրապետությունից ազատագրելու գործում։ Զաքարյանների մասին գիտական հետազոտություններում, «Յուրի Բոդոլյուբսկին ըստ հայկական և վրացական աղբյուրների», «Լիպարիտ զորավարը և նրա նախորդները», «Լիպարիտ զորավարի հաջորդները և Դանիշմանյան տոհմի ծագման խնդիրը» և ուրիշ աշխատություններում բացահայտվում են հայ-վրաց-ռուսական, հայ-վրաց-բյուզանդական և այլ փոխհարաբերությունների բազմաթիվ հարցեր։ Եթե դրան ավելացնենք Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի ժողովուրդների պատմության պարբերացմանը նվիրված աշխատանքները, ապա պատկառելի կդառնա Ս. Երեմյանի կովկասագիտական վաստակը, և նա իրավամբ կանգնում է մեր ժամանակի խոշորագույն կովկասագետների կողքին։

Կա գիտության ուրույն մի բնագավառ, որտեղ առավել մեծ չափով են դրսևորվում Ս. Երեմյանի գիտական հնարավորությունները։ Դա պատմական աշխարհագրությունն ու քարտեզագրությունն է։ Հայաստանի և Կովկասի պատմաաշխարհագրական և քարտեզագրական ուսումնասիրությունների մեջ, որտեղ նա հանդիսանում է եզակի մասնագետ, առավել մեծ չափով է փայլատակում Երեմյան-հետազոտողի տաղանդը։ Գիտության այս ճյուղին նա չի մոտենում որպես ինքնաբավ մի մասնագիտության, այլ իբրև մի բանալու՝ բացահայտելու համար պատմագիտական կարևոր երևույթները։

Ս. Երեմյանի կազմած առաջին քարտեզները հրատարակվել են երեսուն տարի առաջ՝ 1948 թ.՝ ՍՍՀՄ պատմության միջնակարգ դպրոցների ձեռնարկի համար։ Նրանում զետեղված Անդրկովկասի վեց պատմական քարտեզներն ընդգրկում էին հին և միջին դարերը։ 1952 թ. «Հայ ժողովրդի պատմություն» դպրոցական դասագրքի հետ հրատարակվեց 7 քարտեզ պարունակող ատլաս. որը նվիրված էր մ. թ. ա. II—մ. թ. XVIII դդ. Հայաստանի պատմությանը։ Ակադեմիկոս Ե. Կոսմինսկու խմբագրությամբ 1956 թ. Մոսկվայում հրատարակված «Միջին դարերի պատմության» ատլասում Ս. Երեմյանը կազմել է Եվրոպայի և Մերձավոր Արևելքի XI—XIII դդ. տնտեսական քարտեզը։ 1960 թ. Մոսկվայում հրատարակվում է «Ուրարտուի քարտեզը»։ 1961 թ. «Հայկական ՍՍՀ ատլաս»-ում հրատարակվեցին Ս. Երեմյանի՝ Ուրարտուի պետությունից մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատման ժամանակաշրջանն ընդգրկող Հայաստանի ինը պատմական քարտեզները՝ համապատասխան առաջաբանով։ Բազմաթիվ քարտեզներ հրատարակվեցին «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի տարբեր հատորներում։ Մինչ այժմ հայերեն և ռուսերեն հրատարակվել է ընդամենը 82 քարտեզ։ Նրանցում ցույց է տրված հայ ժողովրդի, նրա պետական կազմավորումների տարածքային ու էթնիկական տեղաշարժերի ամեն մի փուլը՝ հնագույն ժամանակներից մինչև նոր շրջանը։

Ս. Երեմյանի պատմաաշխարհագրական և քարտեզագրական աշխատանքների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում «Աշխարհացույց»-ը, որում կարծես թե բևեռանում են գիտության այս ճյուղում ունեցած նրա հիրավի բացառիկ գիտելիքները։ Հայ միջնադարյան գիտական մտքի հոյակապ այդ հուշարձանը՝ VII դ. «Աշխարհացույց»-ը, իր նշանակությամբ դուրս է գալիս հայ իրականության շրջանակներից և, ինչպես ցույց է տվել Ս. Երեմյանը, Եվրոպայում գիտության անկման շրջանում իսկ պահպանել է անտիկ շրջանի աշխարհագրության լավագույն ավանդները։ Ս. Երեմյանին հաջողվեց բացահայտել կարևոր այն իրողությունը, թե «Աշխարհացույց»-ը ոչ այնքան տարբեր երկրների աշխարհագրական նկարագրություն կամ աշխարհագրության ձեռնարկ է, ինչպես կարծում էին ավանդաբար, այլ չպահպանված քարտեզների մի ամբողջ մատենաշար, աշխարհի ատլաս։ Բացատրական այդ բնագրի միջոցով էլ Ս. Երեմյանը 1300 տարի հետո վերականգնում է անդարձ կորած քարտեզների ժողովածուն։ «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի» աշխատությունը լույս տեսնելուց հետո (1963), այն դարձավ ոչ միայն պատմաբանների և աշխարհագրագետների, այլև ազգագրագետների, լեզվաբանների, կենդանաբանների, բուսաբանների սեղանի գիրքը։

Եթե պատմության և բանասիրության ասպարեզում Ս. Երեմյանն ունեցել է իր անվանի ուսուցիչները, ապա պատմական աշխարհագրության ու քարտեզագրության ասպարեզում ինքն է առաջինը ուղի հարթել և իրավամբ մեզանում դարձել այդ նոր դպրոցի հիմնադիրը։ Վստահորեն կարելի է ասել, որ Սովետական Միության և արտասահմանյան հրատարակություններում տպագրված Ս. Երեմյանի կազմած քարտեզներն ընդհանուր ճանաչում են գտել և սովետահայ պատմական աշխարհագրությունն ու քարտեզագրությունը բարձրացրել համաշխարհային առաջավոր գիտության մակարդակի։

Վերը հիշատակված պրոբլեմներից զատ Ս. Երեմյանն իր աշխատություններում արծարծել և հետազոտել է մեծ ու փոքր բազմաթիվ ու տարաբնույթ այլ հարցեր, որոնք պատմագիտական որոշակի արժեք ունեն։ Ինչպիսի խնդիրների էլ նվիրված լինեն և որքան ծավալ էլ ունենան, միևնույն է, Ս. Երեմյանի ուսումնասիրություններն աչքի են ընկնում փաստական նյութի բազմազանությամբ և մշտապես պարունակում են նոր կամ թարմ մտքեր ու կռահումներ։ Սակայն առավել ուսանելին այն է, որ նա պատմական երևույթները դիտում է ոչ թե անփոփոխ, քարացած վիճակում, այլ իրենց գալիքացման մեջ և մշտապես հետամուտ է նրանց կրած փոփոխությունները, նրանց ապրած էվոլյուցիան բացահայտելուն։

Ս. Երեմյանի աշխատությունները տպագրվել են ինչպես հանրապետական գիտական պարբերականներում, այնպես էլ կենտրոնական օրգաններում։ Գիտական ամսագրերում հրատարակված նրա աշխատանքների թիվը հասնում է հարյուրի։ Ակադեմիկոս Ս. Երեմյանի ուսումնասիրությունների գերակշռող մասը հրատարակվել է կոլեկտիվ, ընդհանրացնող աշխատություններում։ Այստեղ նա հանդես է եկել որպես ոչ միայն հին և միջնադարյան Հայաստանի, այլև հարևան ժողովուրդների պատմության մասնագետ։

Սովետահայ պատմագիտության նվաճումներն ընդհանրացնող «Հայ ժողովրդի պատմության» գիտական-ակադեմիական հրատարակության ութհատորյակի առաջին հատորի (Երևան, 1971) պատասխանատու խմբագիրը և հիմնական հեղինակներից է Ս. Երեմյանը։ Նա հանդիսանում է տպագրության

նախապատրաստվող նույն հրատարակության Հայաստանի վաղ ֆեոդալիզմի դարաշրջանին նվիրված երկրորդ հատորի պատասխանատու խմբագիրը և հիմնական հեղինակը։ Ս. Երեմյանը գործուն մասնակցություն է ունենում սովետական հանրագիտարանների և հատկապես «Հայկական սովետական հանրագիտարան»-ի աշխատանքներին։

Երեմյան-գիտնականին բնորոշ է գիտության առաջընթացի ու մասնագիտացման մեր ժամանակներում խիստ արժեքավոր մի հատկանիշ։ Իրեն հետաքրքրող, իր առջև ծառացած գիտական պրոբլեմները լուծելու համար նա հմտորեն հենվում և լայնորեն օգտագործում է պատմության օժանդակ գիտությունները, այս կամ այն իրողությունը բացահայտելու դրանց յուրատեսակ հնարավորությունները, պարունակած նյութը։ Դրանով հարցի ուսումնասիրությունը կանգնում է գիտական ավելի հաստատուն հիմքերի վրա. դառնում առավել համակողմանի։ Ամենևին էլ պատահական չէ, որ Ս. Երեմյանի հեղինակությամբ, խմբագրությամբ, առաջաբանով կամ կարծիքներով ու կոնսուլտացիաներով հրատարակվել են հնագիտության, աղգագրության, վիմագրության, դրամագիտության, ինչպես և հայ մշակույթի այլ մարզերին վերաբերող բազմաթիվ աշխատություններ։

Ամբողջովին գիտությանը նվիրվելը, իր հետաքրքրությունները, իր կյանքը միայն և միայն գիտության մեջ տեսնելու նրա վարքագիծը օրինակ է հանդիսանում, դաստիարակիչ ուժ ձեռք բերում գիտության դռները բախող երիտասարդության և իր կրտսեր գրչակիցների համար։ Գիտության էնտուզիաստի այդ խառնվածքը զուգակցվում է նրա անձնական հատկանիշներին՝ արտակարգ համեստությանը, բարյացակամությանը, շրջապատին օգնելու մշտական պատրաստակամությանը, երիտասարդ կադրերի նկատմամբ հոգատարությանը։

Տակավին երիտասարդական ավյունով աշխատող գիտության երախտավորին, որից դեռ մեծ սպասելիքներ ունի մեր հասարակությունը, մաղթում ենք երկարամյա բեղուն գործունեություն։ Լիովին վստահ ենք, որ նրա նոր հետազոտությունները կհարստացնեն հայագիտության ու կովկասագիտության ոսկե ֆոնդը։